*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ*

*ԵՐԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆ*



*РЕСПУБЛИКА АРМЕНИЯ*

*ЕРЕВАНСКИЙ УНИВЕРСИТЕТ ИМ. МОВСЕСА ХОРЕНАЦИ*

30.07.2014թ.

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 04/407

## ԵՐԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ № 04/407 ՆԻՍՏԻ

**Նիստին մասնակցում էին գիտ. խորհրդի բոլոր անդամները՝**

1. Աղաբաբյան Արթուր
2. Կարագուլյան Հասմիկ
3. Բաբասյան Աշոտ
4. Գալստյան Բակուր
5. Թորոսյան Դավիթ
6. Գրիգորյան Պարգև
7. Հակոբյան Գեորգի
8. Հակոբյան Մամիկոն
9. Սահակյան Աննա
10. Սողոմոնյան Մյասնիկ
11. Քթրյան Գագիկ
12. Նիկողոսյան Արամ
13. Մնացականյան Լիլիթ
14. Դավթյան Կարինե
15. Այվազյան Հռիփսիմե
16. Սարգսյան Տիգրան
17. Չոբանյան Լիանա
18. Նավասարդյան Լիլիթ
19. Արաբյան Հասմիկ
20. Էլյազյան Անի

**Օրակարգում դրված էր՝**

1. Գիտական խորհրդի անդամների փոփոխության հարցը,

2. Դրամաշնորհի շրջանակներում IV եռամսյակի համար նախատեսվող գնումները:
3. Ուսանողների և շրջանավարտների շրջանում համալսարանի ՈԱԿ-ի վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացման հարցը:
4. Ուսանողի գնահատման արդյունավետության բարձրացմանը նվիրված պրեզենտացիայի պատրաստումը:

Ելույթ ունեցան՝

1. Ռեկտոր Ա. Աղաբաբյանը ներկայացրեց, որ Թորոսյան Դավիթի աշխատանքից ազատման պատճառով խորհրդում առկա է թափուր տեղ, անհրաժեշտ է նոր անդամի թեկնածություն և առաջարկեց Բաղդոյան Մարիանայի թեկնածությունը:
2. Ռեկտոր Ա. Աղաբաբյանը ներկայացրեց դրամաշնորհի շրջանակներում IV եռամսյակում նախատեսվող գործողությունները՝ դասախոսների և ուսանողների համար ուղեցույցների հրատարակում, ՈԱԿ ձեռնարկի հրատարակում, ԶԼՄ-ների հետ համագործակցություն, գործուղում արտասահման և այլն, և այդ գործողությունների իրականացման համար անհրաժեշտ գնումների ցանկը:
3. ՈԱԿ ղեկավար Գ. Քթրյանը ներկայացրեց շրջանավարտների և ուսանողների շրջանում համալսարանի ՈԱԿ-ի մասին տեղեկացվածության կարևորությունը և տեղեկացվածության մակարդակը բարձրացնելու նպատակով առաջարկեց կազմակերպել հանդիպումներ ուսանողների և շրջանավարտների հետ:
4. ՈԱԿ ղեկավար Գ. Քթրյանը առաջարկեց դասախոսների հետ անցկացնել հանդիպում գնահատման արդյունավետության բարձրացման թեմայով: Առաջարկեց պատրաստել պրեզենտացիաներ և հանդիպումը անցկացնել պրեզենտացիաների ներկայացման միջոցով:

Որոշեցին՝

1. Գիտական խորհրդի կազմում ընդգրկել Բաղդոյան Մարիանային:
2. IV եռամսյակում իրականացնել գնումներ հետևյալ չափով՝

   Համակարգչային սարքավորումներ – 8550 (ութ հազար հինգ հարյուր հիսուն ՀՀ դրամ),

   Գրենական պիտույքներ – 121.240 (հարյուր քսանմեկ հազար երկու հարյուր քառասուն ՀՀ դրամ),

Եթերաժամի և տպագիր մամուլի տարածքի գնում – 120.000 (հարյուր քսան հազար ՀՀ դրամ),

ՈԱԿ բուկլետի ստեղծում – 54.000 (հիսունչորս հազար ՀՀ դրամ),

Ուսանողի ուղեցույցի հրատարակում – 105.200 (հարյուր հինգ հազար երկու հարյուր ՀՀ դրամ),

Դասախոսի ուղեցույցի հրատարակում - 105.200 (հարյուր հինգ հազար երկու հարյուր ՀՀ դրամ),

ՈԱԿ ձեռնարկի հրատարակում – 210.000 (երկու հարյուր տասը հազար ՀՀ դրամ),

Վերոնշյալ ձեռնարկների համար խմբագրման նպատակով խորհրդատվական ծառայությունների գնում – 190.000 (հարյուր իննսուն հազար ՀՀ դրամ),

Գործուղում արտասահման – 2.475.340 (երկու միլիոն չորս հարյուր յոթանասունհինգ հազար երեք հարյուր քառասուն),

Արտերկրից փորձագետների հրավիրում – 990.000 (ինը հարյուր իննսուն հազար ՀՀ դրամ),

ՈԱԿ ձեռքբերումներին և խնդիրներին նվիրված 2 օր սեմինար – 1.000.000 (մեկ միլիոն դրամ):

3. Ուսանողների և շրջանավարտների շրջանում համալսարանի ՈԱԿ-ի վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացման համար պարբերաբար կազմակերպել հանդիպումներ:
4. Պատրաստել պրեզենտացիա ուսանողի գնահատման արդյունավետության բարձրացման թեմայով և ներկայացնել դասախոսների հետ հանդիպման ժամանակ:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ *Ա. Աղաբաբյան*

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ *Հ. Կարագուլյան*